

## Դեղագործության կառավարման ամբիոն

### Մագիստրատուրայի ընդունելության քննական հարցաշար

(2019-2020)

1. Հանրային առողջապահություն: ԴԷԿ (ԴԿԷ) առարկան: Առողջապահական համակարգի բնութագիրը, զարգացման ռազմավարությունը: ՀՀ առողջապահության նախարարություն: Դեղագործական համակարգ, բնութագիրը: Հասկացողություն համակարգի և համակարգային մոտեցման մասին: “Համակարգային մոտեցում” և “համակարգային վերլուծություն” հասկացողությունների համեմատական բնութագրերը:
2. Դեղագործական ծառայության կառավարման և կարգավորման մարմիններ: ՀՀ առողջապահության նախարարության դեղային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն: Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն:
3. Միջազգային համագործակցություն: Միջազգային դեղագործական կազմակերպություններ: Առողջապահության համաշխարհային կազմակերպություն: ՄԱԿ-ի թմրամիջոցների հսկման միջազգային կոմիտե: Դեղագործական միջազգային միավորում (դաշնություն): Եվրաֆարմֆորում:
4. Դեղը և դրա դերը առողջապահության համակարգում: Դեղերի նշանակությունը: Դեղերի ստեղծումը: Նոր և վերարտադրված դեղեր: Նախակլինիկական հետազոտություններ և կլինիկական փորձարկումներ:
5. Դեղերի անվանումները: Որք դեղեր: ATC դասակարգում: ATC դասակարգման համակարգի անվանակարգը և կառուցվածքը: ATC դասակարգման սկզբունքները, համակարգ ներառելու չափանիշները: ATC համակարգի առավելություններն ու թերությունները:
6. Բնակչության դեղորայքային ապահովումը: Դեղերի մանրածախ իրացումը, առանձնահատկությունները: Հանրային դեղատներ: Դասակարգումը, խնդիրները, գործառույթները, աշխատանքի կազմակերպումը և տեղաբաշխումը, տարածքային կազմը, ներկայացվող պահանջները:
7. Դեղատան արտադրական գործունեությունը: Դեղերի պատրաստման բաժնի աշխատանքի կազմակերպումը: Որակի ներդեղատնային հսկման եղանակները, գնահատումը: Մանրէագերծ լուծույթների պատրաստման և որակի հսկման պահանջները:

8. Դեղատոմս, ռեկվիզիտները: Դեղատոմս դուրս գրող անձի իրավասությունների գնահատումը: Դեղատոմսի գործողության ժամկետի ստուգումը: Դեղատոմսային ձևաթղթեր: Դեղատոմսերի գնահատումը, գրանցումը: Դեղերի բաց թողումը դեղատնից: Առանց դեղատոմսի, անվճար և գեղչով բաց թողումներ: Դեղատոմսերի պահպանումը: Դեղերի հաշվառումը:

9. Դեղերի պատրաստումը դեղատանը: Դեղերի պատրաստման աշխատանքների կազմակերպում: Լաբորատոր-մանրակշռման աշխատանքների կազմակերպումը: Դեղատանը պատրաստված դեղերի ձևավորումը:

10. Դեղերի իրացումը առանց դեղատոմսերի: Պատասխանատու ինքնաբուժում: Ինքնաբուժման գործընթացը, հիմնախնդիրները, վտանգները, կառավարման գործընթացը: Դեղագործական հոգածություն

11. Ստացիոնար հիվանդների դեղորայքային ապահովումը: Հիվանդանոցային դեղատուն, աշխատանքի ապահովումը: Դեղերի արդյունավետ (ռացիոնալ) կիրառում: Դեղերի ոչ արդյունավետ նշանակումներ և կիրառում:

12. Դեղագործական կադրեր: Դեղագետի դերը առողջապահության համակարգում: Դեղագետի դերի մասին ԱՀԿ-ի բանաձևը: “7 աստղանի դեղագետ”: Դեղագետ շրջանավարտի կողմից իրականացվող գործունեությունները: Դեղագործական էթիկա և դեոնոլոգիա: Դեղագետի/դեղագործի էթիկական կոդեքսը:

13. Դեղերի շրջանառության կարգավորումը, դրա անհրաժեշտությունը: Դեղերի շրջանառության կարգավորման տարրերն ու կարևորագույն բաղադրիչները: Դեղագործական օրենսդրություն, պետական քաղաքականությունը դեղերի ոլորտում: Դեղերի շրջանառության կարգավորման ինստիտուցիոնալ միջավայրը: Ինստիտուտներ և կազմակերպություններ:

14. Լիցենզավորում: Լիցենզավորման ենթակա գործունեություններ: Լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումը: Դեղերի գրանցման փուլերը: Գրանցման հավաստագիրը անվավեր ճանաչելու դեպքերը:

15. Դեղերի կողմնակի ազդեցությունների դիտարկումը: Դեղագոնություն: Դեղերի անվտանգության մշտադիտարկման (հետգրանցումային հսկողության) անհրաժեշտությունը:

16. Հանրապետության դեղորայքային ապահովումը: Դեղագործական լոգիստիկա: Սպրանքաշարժի (բաշխման) ուղիները դեղագործական շուկայում: Մեծածախ միջնորդներ: Բնակչության դեղորայքային (դեղային) ապահովում: Դեղերի մատակարարման համակարգի բնութագիրը, գործունեության կազմակերպումը: Միջնորդների դասակարգումը: Դեղագործական պահեստ:

17. Ապրանքի պահպանումն ու հաշվառումը պահեստում: Ապրանքային պաշարների կառավարումը: Ապրանքի շարժը դեղագործական պահեստում: Ապրանքի իրացումը մատակարարի պահեստից:

18. Դեղերի ներմուծման կազմակերպումը: Դեղերի ներմուծման գործընթացի փուլերը: Դեղերի ներմուծման թույլտվություն, հավաստագրի տրամադրում: Դեղային ապահովումը մարդասիրական օգնության ճանապարհով և բարեգործական ծրագրերի շրջանակներում: Դեղերի պետական գնումները:

19. Դեղերի, դեղանյութերի և ապրանքների պահպանումը դեղագործական կազմակերպությունում: Պահեստային սենյակներին ներկայացվող պահանջները: Թմրամիջոցների և թունավոր նյութերի , հրավտանգ և պայթյունավտանգ նյութերի պահպանման սենյակներին ներկայացվող պահանջները:

20. Դեղերի արդյունավետ կիրառում: Հիմնական դեղեր: Բուժման ստանդարտ ուղեցույցներ: Ֆորմուլյարային համակարգ: Տեղեկատվության տեսական հիմունքները: Դեղերի մասին տեղեկատվություն:

21. Շուկա: Շուկայի կառուցվածքի հիմնական տեսակները, բնութագրիչները: Հակամենասիրական քաղաքականություն, քվոտաներ: Պահանջարկ, առաջարկ: Պահանջարկի և առաջարկի օրենքները, կորերը: Շուկայական պահանջարկ և շուկայական առաջարկ: Շուկայական հավասարակշռություն, կորերը:

22. Պահանջարկի և առաջարկի ոչ գնային դետերմինանտները: Շարժ երկու կորերում: Առաձգականություն: Առաջարկի և պահանջարկի գնային առաձգականության վրա ազդող գործոնները: Դեղագործական տնտեսագիտության առանձնահատկությունները:

23. Մարկետինգ, ծագումը, զարգացումը, սահմանները, ֆունկցիաները, նպատակը, հիմնական տեսակները: Սպառողական արժեք: Փոխանակում: Գործարք: Շուկաների գունային բաժանումը: Շուկայական նիշա:

24. Մարկետինգի օգտագործման տեսակները, կառավարման հայեցակարգերը: Շուկայական հնարավորությունների վերլուծություն: Մարկետինգային միջավայրի բնութագիրը: Թիրախային շուկաների ընտրություն: Մարկետինգի համալիր:

25. Ռազմավարական վերլուծություններ: Բիզնես պայուսակ : Մարկետինգային հետազոտություններ: Մարկետինգային տեղեկատվության տեսակները, հավաքումը, հավաքման հերթականությունը, վերլուծությունը:

26. Ապրանքի դիրքավորումը շուկայում: Ապրանքի տարբերակում: Տարբերակման սխալները: Մրցակցային առավելությունների ընտրություն: Ապրանքի մրցակցային քարտեզի կազմում:

27. Առևտրային տեղեկատվական միջոցներ: Դեղագործական ապրանքների մակնիշավորումը, փաթեթավորումը, անվանումները: Ներդիր-թերթիկի պարունակությունը, ներկայացվող պահանջները: Տեղեկատվական նշաններ:

28. Ապրանքների ստվերագծային կողավորումը: Կողի կառուցվածքը, նշանակությունը: Ստվերագծային կողի տեղադրման տարբերակները և կանոնները: Դեկոլավորում: Սկաներներ, դրանց տեսակները:

29. Մերչենդայզինգ, նպատակը, խնդիրները, ընդհանուր սկզբունքները: Դեղատնային վաճառքի առանձնահատկությունները: Գնման տեսակները և գործընթացի փուլերը: Դեղատնային մերչենդայզինգի կանոնները: Մերչենդայզինգի կանոնների կիրառումը դեղատանը:

30. Արհեստավարժ վաճառքի հմտություններ, վաճառքի արվեստ: Վաճառքի առավելությունները, հաջողության հասնելու հիմունքները: Ճիշտ մոտեցում հաջող վաճառքի համար: Վաճառքի գործընթացը:

31. Տնտեսական հաշվառման համակարգը և այն վարելու անհրաժեշտությունը: Տնտեսական հաշվառման մեջ օգտագործվող չափիչները, բնութագրերը: Տնտեսական հաշվառման տեսակները և դրանց համառոտ բնութագրերը: Հաշվապահական հաշվառման դասակարգումը: Ֆինանսական և կառավարչական հաշվառում: Հաշվապահական տեղեկատվության օգտագործողները:

32. Ֆինանսական հաշվետվություններ օգտագործողները և նրանց տեղեկատվական կարիքները: Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները: Ֆինանսական հաշվառման հիմունքները: Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպա-իրավական տեսակները: Տնտեսվարող սուբյեկտի կամ սահմանազատման սկզբունքը:

33. Կազմակերպության միջոցները: Տնտեսական միջոցներ (ակտիվներ): Գործառնությունների և տնտեսական կյանքի դեպքերի արդյունքում կազմակերպության ակտիվներում, սեփական կապիտալում և պարտավորություններում տեղի ունեցող փոփոխությունների դասակարգումը: Հաշվետու տարի:

34. Հաշվապահական հաշվառման հիմնական հավասարումը (The accounting equation), ընդլայնված (դինամիկական) տեսքը: Պաշարների կանխիկ, ապառիկ գնման և վաճառքի հաշվառումը: Դեբետորական և կրեդիտորական պարտքերի

մարման հաշվառումը: Տրված կանխավճարների, հաշվեգրված ծախսերի հաշվառումը: Շահույթի կամ վնասի մասին հաշվետվության կազմումը:

35. Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված լրացուցիչ ներդրումների հաշվառումը, սեփականատերերի կողմից իրականացրած մասհանումների հաշվառումը: Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության կազմումը: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության կազմումը:

36. Հաշվապահական գրանցումները (ժամանակագրական, համակարգված), փուլերը, հաշվետվությունների կազմումը: Հաշվապահական հաշվառման հաշիվները (T-հաշիվներ): Կրկնակի գրանցման համակարգը: Ֆինանսական հաշվառման տարրերը և ճանաչումը:

37. Ապրանքանյութական արժեքների գույքագրում, գույքագրման խնդիրները, նախապատրաստական աշխատանքները, անցկացման կարգը: Գույքագրման տվյալների ամփոփում: Բնական ծախսի հաշվարկ: Ապրանքա-նյութական արժեքներ, որոնք գրանցվում են առանձին գույքացուցակներում: Հսկիչ դրամարկղային մեքենաներ: Դրամական միջոցների և դրամական փաստաթղթերի գույքագրում:

38. Աշխատանքի և աշխատավարձի հաշվառումը: Աշխատանքային պայմանագիր: Աշխատաժամանակ, տևողությունը: Աշխատավարձի տեսակները և աշխատավճարման ձևերը:

39. Աշխատանքի ընդունվելիս պահանջվող փաստաթղթեր: Փորձաշրջան՝ աշխատանքի ընդունվելիս: Հավելավճարներ: Արձակուրդ: Արձակուրդային վճարի հաշվարկ:

40. Ապրանքային հաշվառում: Ապրանքային հաշվետվության մասերը: Ապրանքի ծախսային օպերացիաներ: Իրացում: Ապրանքի իրացումը վերջնական սպառողին, իրացումը ինստիտուցիոնալ սպառողներին:

41. Դրամական միջոցներ: Կանխիկ դրամական միջոցների հաշվառում: Դրամարկղային գործառնություններ՝ մուտքային և ծախսային: Դրամարկղային օրդերներ: Դրամարկղային գիրք: Գումարի հանձնումը գանձապահին:

42. Կանխիկ և անկանխիկ հաշվարկներ: Վճարման հանձնարարականներով հաշվարկներ: Վճարման հանձնարարականի վավերությունը և ակցեպտավորումը: Հաշվարկներ ակրեդիտիվով (վարկագրով): Չեկերով հաշվարկներ, չեկերի դասակարգումը: Չեկով փոխանցելու իրավունքները: Վճարային քարտերի տրամադրումը, լրացուցիչ քարտեր: Ինկասո հաշվարկներ:

43.Ապրանքաշրջանառության հաշվառում: Մուտքային-ելքային ապրանքային օպերացիաներ: Ապրանք, հաշվառման սկզբունքները: Դեղատան ապրանքային մատակարարման փուլերը: Մատակարարի ընտրության փուլերը, սկզբունքները:

44. Գնման-վաճառքի պայմանագիր, բաժինները: Ապրանքի մատակարարում: Ապրանքի ընդունում: Վճարման իրականացում: Ապրանքի ծախսային օպերացիաներ: Դուրսգրում: Դուրսգրումների հաշվառման փուլերը: